# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ... ԼՈՒՐԵՐ

## «ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԱՍՏԻԱՐԱԿ» ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հունիսի 1-ին՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առիթով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հյուրընկալվեցին Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի (ՔԴԿ) եւ ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության կողմից համագործակցաբար կազմակերպված նախադպրոցական ուսումնական հաստատությունների (ՆՈՒՀ) «Լավագույն տնօրեն» եւ «Լավագույն դաստիարակ» հանրապետական մրցույթի հաղթողները եւ նրանց շուրջ 600 սաները: Մայիսի 25-ին անցկացված մրցույթին մասնակցել էին նախապես հայտ ներկայացրած 44 տնօրեններ եւ 76 դաստիարակներ: Մրցույթի գրավոր եւ բանավոր փուլերի արդյունքում որոշվել են լավագույն տնօրեններն ու դաստիարակները՝ յուրաքանչյուր մարզից եւ Երեւանից՝ ընդամենը 11 տնօրեն եւ 11 դաստիարակ:

Այս կապակցությամբ, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ ներկայությամբ ՀՀ Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանի, Մայր Տաճարում տեղի ունեցավ մանուկների եւ մրցույթի հաղթողների օրհնության արարողությունը, որի ավարտին Վեհափառ Հայրապետն իր պատգամը բերեց արարողության մասնակիցներին:

«...Սուրբ Ավետարանից տեղեկանում ենք, թե ինչպես մեր Տեր Հիսուս սիրում եւ ջերմությամբ էր վերաբերվում բոլոր մանուկներին, օրհնում նրանց եւ թույլ տալիս, որ Իր մոտ գան՝ նրանց անարատ էության մեջ տեսնելով երկնքի արքայության բարիքները կրելու արժանիքը: Մարդկային ազգի փրկության համար Քրիստոս կարեւորեց մանկանալու եւ մանկան պարզասրտության ու մաքրության բարի հատկությունները: Այս մտադրությամբ է, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, կարեւորելով մատաղ սերնդի կրթության եւ դաստիարակության գործում հատկապես նախադպրոցական ուսումնական հաստատության միջավայրում զարգացող եւ հասակ առնող երեխաների կյանքում աստվածսիրության եւ հայրենասիրության հաստատուն գիտելիքների սերմանման առաքելությունը, այս տարի առաջին անգամ ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության հետ համագործակցաբար կազմակերպեց եւ իրականացրեց «Լավագույն տնօրեն» եւ «Լավագույն դաստիարակ» հանրապետական մրցույթը», - նշեց Հայոց Հայրապետը:

Իր խոսքում Նորին Սրբությունն ընդգծեց, որ հարկ է մանուկներին վաղ հասակից կրթել եւ դաստիարակել բարոյական սկզբունքներով, հոգեշահ խրատներով, եւ առաքինագործ կենցաղավարությամբ բարի օրինակ լինել նրանց՝ հավելելով, որ «երբ մանուկների մտավոր կրթությունն ընթանում է բարոյական եւ հոգեւոր դաստիարակության հետ, ապա իմաստնա-

նում են նրանց մանկական ըմբռնումները, եւ նրանց մատաղ սրտերը ձգտում են առաքինության մաքրության»:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց ՀՀ ԿԳ նախարարին՝ համագործակցության եւ Եկեղեցուն ցուցաբերած իր ազնիվ աջակցության համար: Նորին Սրբությունը նաեւ իր գնահատանքը բերեց մրցույթի կազմակերպիչներին, բոլոր մրցանակակիրներին եւ նախաձեռնության բարերար տիար Տիգրան Հովհաննիսյանին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Աստված շնորհազարդի մանուկներին եւ հանապազ օրհնությամբ պայծառ երկինք եւ իմաստություն ու արիություն պարգեւի նրանց՝ անսայթաք ընթանալու Տիրոջ ճշմարտության ճամփաներով, որպեսզի դառնան արժանավոր հետնորդները մեր փառապանծ հայրերի եւ իրենց կյանքով ու գործով պայծառություն բերեն մեր ժողովրդի եւ Հայրենիքի կյանքում՝ միշտ մնալով հավատարիմ զավակները առաքելահաստատ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու:

Օրհնության արարողության ավարտին Վեհափառ Հայրապետի եւ ՀՀ ԿԳ նախարարի կողմից պատվոգրեր, գրքեր եւ դրամական պարգեւներ շնորհվեցին լավագույնը ճանաչված տնօրեններին եւ դաստիարակներին:

«Լավագույն տնօրեն» անվանակարգում մրցանակների արժանացան Սվետլանա Մանջոյանը (Արարատ, Վեդիի N 2 մանկապարտեզ), Նունե Առաքելյանը (Երեւան, Մալաթիա-Սեբաստիա N 90 մանկապարտեզ), Լիանա Խեչանյանը (Արագածոտն, Աշտարակի Արաքս Մուրադյանի անվ. մանկապարտեզ), Կարինե Գրիգորյանը (Արմավիր, Էջմիածնի N 15 մանկապարտեզ), Գայանե Մնացականյանը (Կոտայք, ք. Հրազդանի N 5 մանկապարտեզ), Լուսինե Հայրապետյանը (Շիրակ, Մարալիկի համայնքային նախադպրոցական հիմնարկ), Բելլա Կոստանյանը (Սյունիք, ք. Կապանի N 6 մանկապարտեզ), Արմաիդա Աբովյանը (Լոռի, ք. Վանաձորի N 35 մանկապարտեզ), Անահիտ Ղարիբյանը (Գեղարքունիք, ք. Սեւան N 3 մանկապարտեզ), Գոհար Պողոսյանը (Վայոց Ձոր, ք. Եղեգնաձորի N 5 մանկապարտեզ), Շուշանիկ Գալստյանը (Տավուշ, Բերդի N 3 մանկապարտեզ):

«Լավագույն դաստիարակ» անվանակարգում հաղթողներն էին Սեդա Սահակյանը (Արարատ, ք. Աշտարակի N 5 մանկապարտեզ), Աղավնի Համբարձումյանը (Արարատ, գ. Վ. Արտաշատի «Լուսնթագ» մանկապարտեզ), Գյուլնարա Համբարձումյանը (Երեւան, Դավթաշենի N 59 մանկապարտեզ), Սաթիկ Ալվայանը (Արագածոտն, Աշտարակի «Մանուշակ» մանկապարտեզ), Արաքսյա Ղազարյանը (Արմավիր, Էջմիածնի N 10 «Շուշան» մանկապարտեզ), Քրիստինե Վարդանյանը (Կոտայք, ք. Չարենցավանի «Հրաշք» մանկապարտեզ), Հասմիկ Խաչատրյանը (Շիրակ, ք. Գյումրու N 21 մանկապարտեզ), Մարգո Գրիգորյանը (Սյունիք, ք. Կապանի N 6 մանկապարտեզ), Սվետլանա Թումանյանը (Սյունիք, ք. Գորիս N 2 մանկապարտեզ), Աննա Հակոբյանը (Լոռի, ք. Վանաձորի N 5 մանկապարտեզ), Հասմիկ Մուշեղյանը (Գեղարքունիք, ք. Մարտունու N 3 մանկապարտեզ), Էմմա Բաղալյանը (Վայոց Ձոր, ք. Եղեգնաձորի N 5 մանկապարտեզ), Գայանե Թամրազյանը (Տավուշ, գ. Հաղարծնի մանկապարտեզ):

## Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունիսի 2-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին հանդիսավորությամբ նշեց Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնը: Տոնի առիթով Միածնաէջ Մայր Տաճարում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Գեղարքունիքի թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը:



Մանուկների օրհնություն Մայր Աթոռում

Պատարագիչ Սրբազան Հայրը, իր քարոզում անդրադառնալով տոնի կարեւորությանն ազգային-եկեղեցական կյանքում, մասնավորապես ասաց. «Անշուշտ Ս. Էջմիածինը դարերի ալեկոծություններ տեսավ, Հայրապետական աթոռն ասպանդական եղավ, սակայն երբեք Ս. Էջմիածնի հավերժական տեսիլքն իր պատմական վայրից չխախտվեց, տեսիլքը մնաց այստեղ ու վերահաստատեց իր պատմական հանգամանքը: ...Տասնյոթ դարեր անցան հավատքի եւ հավատարմության, թեկուզեւ փորձությունների ու վերաշինության, բայց անմար լույսի սյունը, Աստծո տաճարն ու աղոթքի տունը հարատեւ նույն տեղում է եւ մշտապես ձգում է համայն հայությանը»: Սրբազանը հավատացյալ հայորդիներին պատգամեց չխախտել իրենց հավատարմության ուխտը եւ հաստատուն պահել նվիրումը Ս. Էջմիածնի հանդեպ:

Պատարագի ավարտին Իջման Ս. Սեղանի առջեւ, հանդիսապետությամբ Մայր Աթոռի Վանական խորհրդի նախագահ եւ Հրապարակչական բաժնի տնօրեն Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանի, կատարվեց Հայրապետական մաղթանք՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պայծառության եւ անսասանության համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հունիսի 4-ին Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքում տեղի ունեցավ Երուսաղեմի Հայոց Պատրիարք Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանի գահակալության արարողությունը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ գահակալության արարողությանը մասնակցեցին Մայր Աթոռի Վանական խորհրդի նախագահ ու Հրապարակչական բաժնի տնօրեն Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը եւ Մեծ Բրիտանիայի Հայոց թեմի առաջնորդ Տ.Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄՈՆՍԵՐԱՏ ԿԱԲԱԼՅԵԻՆ

Հունիսի 10-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց աշխարհահռչակ օպերային երգչուհի Մոնսեռատ Կաբալյեին՝ ուղեկցությամբ ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի:

Վեհափառ Հայրապետը ողջունեց Մոնսերատ Կաբալյեի այցը համայն հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ նշելով, որ նրա ներկայությունը մեծ խանդավառություն ու ոգեւորություն է առաջացրել հայ ժողովրդի զավակների մոտ, ովքեր առանձնակի սեր ունեն երաժշտության հանդեպ:

Խոսելով Հայաստան կատարած այցելությունից ստացած իր տպավորությունների մասին՝ Մոնսերատ Կաբալյեն իր հերթին նշեց, որ այս այցելությունն իր համար ուխտագնացություն է՝ Հայաստանն անվանելով քրիստոնեական հավատի բաց սիրտը:

Ջերմ զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ Հայոց Եկեղեցու պատմությանը,

հայ ժողովրդի կյանքում Եկեղեցու դերակատարությանը, հայ հոգեւոր երաժշտությանը եւ մարդկության կյանքում քրիստոնեական հավատի ու արժեքների կարեւորությանը: Կարեւորվեց նաեւ երկու ժողովուրդների միջեւ պատմականորեն ձեւավորված ջերմ հարաբերությունների ամրապնդումն ու զարգացումը:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց աշխարհահռչակ երգչուհուն:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի վանական խորհրդի նախագահ, Հրապարակչական բաժնի տնօրեն Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը, ում ուղեկցությամբ տիկին Կաբալյեն այցելեց նաեւ Մայր Տաճար եւ Մայր Աթոռի թանգարաններ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## «ԲՈԼՈՐԸ ԳՆՈՒՄ ԵՆ ԵՐԵՒԱՆ» ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԵՒ «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԳԱՎԱԹ»-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Հունիսի 14-ին «Բոլորը գնում են Երեւան» ժողովրդական դիվանագիտական առաքելության եւ «Խաղաղության գավաթ» նախաձեռնության Լատվիայի եւ Էստոնիայի ներկայացուցիչներն այցելեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ուր նրանց ընդունեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը:

Հանդիպմանը «Բոլորը գնում են Երեւան» ժողովրդական դիվանագիտական առաքելության ղեկավար Միլիս Կուբիցը, «Խաղաղության գավաթ» նախաձեռնության նախագահ Յուրի Կայդան եւ Ռիգայի ու Տալինի հոգեւոր հովիվ Տ. Խոսրով քահանա Ստեփանյանը ներկայացրեցին առաքելության նպատակը, որ է՝ աշխարհի ուշադրությունը հրավիրել Հայաստանի մշակութային, պատմական եւ հոգեւոր արժեքների վրա եւ բարեկամական ձեռք մեկնել հայ ժողովրդին: Տեղեկացվեց, որ ծրագրի շրջանակներում հունիսի 11-16-ը աշխարհի տարբեր երկրներից Հայաստան են այցելել շուրջ 600 հասարակական եւ մշակութային գործիչներ:

Այնուհետեւ պատվիրակության այցը հայոց հոգեւոր կենտրոն ողջունեց Արշակ Սրբազանը՝ ներկաներին փոխանցելով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ու գնահատանքը խաղաղարարական իրենց կարեւոր առաքելության իրականացման համար: Սրբազան Հայրը հույս հայտնեց, որ նախաձեռնությունն իր խորհրդի մեջ անարձագանք չի մնա եւ կնպաստի մարդկային հարաբերությունների մեջ խաղաղության եւ համերաշխության ամրապնդմանը: Մայր Աթոռի դիվանապետը մեծապես կարեւորեց Եկեղեցու՝ որպես խաղաղության քարոզչության առաջին ջահակրի դերակատարությունն այս նվիրական առաքելության իրականացման ճանապարհին:

Վերջում տիարք Կուբիցը եւ Կայդան, շնորհակալություն հայտնելով ընդունելության եւ ցուցաբերված զորակցության համար, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին փոխանցեցին «Խաղաղության գավաթ»-ի հարթաքանդակը:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն, Արթիկի թեմի առաջնորդ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը եւ Դիվանապետ Եկեղեցի-հասարակություն բաժնի պատասխանատու Տ. Երեմիա աբեղա Աբգարյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



Վեհափառ Հայրապետն ընդունեց Մոնսերատ Կաբալյեին

# ՇՔԱՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հունիսի 20-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանի շենքում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու շքանշանների հանձնման արարողություն: Իրենց ազգօգուտ և եկեղեցանվեր գործունեության համար Հայ Եկեղեցու «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանի արժանացան տիար Լազար Սուքյանը և տիկին Լաուրա Հարությունյանը:

Արարողության ընթացքում նվիրյալների կյանքին ու գործունեությանն անդրադարձան Սիմեոն Հախումյանը և Լազար Սուքյանը: Այնուհետև «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո բերվեցին Հայրապետական սրբատառ կոնդակները, որոնք ընթերցեցին Գեղարքունիքի թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը և Մայր Աթոռի Հոգևոր կրթական հաստատությունների վերատեսուչ, Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Գևորգ եպիսկոպոս Սարոյանը:

Տիար Լազար Սուքյանին ուղղված հայրապետական կոնդակում մասնավորապես նշված է. «Խորհրդային տարիներից սկսյալ շուրջ քառորդ դար Դուք ծառայեցիք Հայ Եկեղեցու գործերի խորհրդում և ՀՀ Կրոնի գործերի պետական խորհրդում՝ տեսուչից հասնելով մինչև նախագահի պաշտոնին: Այսօր ուրախությամբ ենք անդրադառնում, որ Դուք միշտ եղաք ու մնացիք մեր Եկեղեցու շահերի նվիրյալ պաշտպանն ու ազնիվ ջատագովը՝ ջանալով առավելագույնն ի սպաս բերել, որպեսզի Հայոց Եկեղեցին հնարավորություն ունենա լիարժեքորեն իրականացնել իր օրհնաբեր առաքելությունը մեր ժողովրդի կյանքում: Հավատավոր հայորդուդ աջակցության շնորհիվ իրականացվեցին բազմաթիվ աստվածահաճո նախաձեռնություններ, որոնք պայծառություն բերեցին մեր Եկեղեցուն և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Ձեր գործունեության կարևոր արգասիքներից եղավ Հաղպատի, Սանահինի, Նորավանքի և պատմական այլ վանքերի ու եկեղեցիների վերադարձը մեր Սուրբ Եկեղեցուն, որով մեր դարավոր սրբավայրերը վերստին իրենց դռները բացեցին հավատացելոց առջև՝ ծառայելով հայորդյաց հոգևոր կարիքներին: Արժանահիշատակ են նաև Ձեր ջանքերը Սուրբ Էջմիածնի գանձերի ցուցադրությունը արտերկրում կազմակերպելու գործում, որն ունեցավ շարունակական ընթացք՝ մեր հոգևոր-մշակութային հարստությունը ճանաչելի դարձնելով օտար ժողովուրդներին»:

Տիկին Լաուրա Հարությունյանին ուղղված հայրապետական կոնդակում ասված է. «Ուրախ ենք այսօր հաստատելու, որ հակառակ խորհրդային տարիների հակաեկեղեցական տրամադրությունների, Դուք կարևոր աջակցություն բերեցիք մեր Սուրբ Եկեղեցուն՝ քրիստոնեական մեր հավատքը պահպանելու և մեր հոգևոր հարուստ ավանդներն ու ժառանգությունը սերունդներին փոխանցելու սրբազան իր առաքելության մեջ: Հայաստանի անկախությունից հետո ևս շարունակեցիք արդյունավորապես ծառայել մեր Հայրենիքին՝ Ձեր կարողություններն ի սպաս բերելով մեր Սուրբ Եկեղեցու գործունեությանը: Մենք գոհություն ենք մատուցում Բարձրյալին, որ մեր ժողովրդին օրհնել է Ձեզ պես հավատավոր ու եկեղեցասեր զավակներով, ովքեր իրենց կյանքն իմաստավորում են աստվածահաճո գործերով»:

Կոնդակների ընթերցումից հետո Վեհափառ Հայրապետը Լազար Սուքյանին և Լաուրա Հարությունյանին հանձնեց «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվո շքանշան: Մեծարյալներն

իրենց հերթին շնորհակալության խոսք ուղղեցին Նորին Սրբությանը եւ Մայր Եկեղեցուն իրենց նկատմամբ ցուցաբերած ուշադրության եւ բարձր գնահատանքի համար:

Արարողության ավարտին ներկաներին իր օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ վերստին շնորհավորելով փեսա Լազար Սուջյանին եւ փեսին Լաուրա Հարությունյանին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԳՈՆՍԱԼԵՍ ԳՈՒԱՐՉԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Հունիսի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց իսպանացի նշանավոր գրող Գոնսալես Գուարչին՝ ուղեկցությամբ Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանի:

Ողջունելով իսպանացի մտավորականի այցը համայն հայության հոգեւոր կենտրոն՝ Նորին Սրբությունն իր բարեմաղթանքն ու օրհնությունը բերեց նրան եւ հանդիպմանը ներկա ընտանիքի անդամներին:

Տիար Գոնսալես Գուարչան իր հերթին շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը ջերմ ընդունելության համար եւ Վեհափառ Հայրապետին փոխանցեց Հայոց ցեղասպանությանը նվիրված իր «Հայկական կտակ», «Սպիտակ լեռ» եւ «Հայոց ծառը» ստեղծագործությունների ռուսերեն թարգմանությունները:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը գնահատանքով անդրադարձավ Գոնսալես Գուարչի ստեղծագործություններին՝ նշելով, որ գրողի ազնիվ զգացումներն արտահայտող ստեղծագործությունները մարդասիրական այն փաղանգի շարունակությունն են, որոնք իրենց ձայնն են բարձրացրել Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման համար: Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակություն հայտնեց Գոնսալես Գուարչին հայ ժողովրդին եւ առհասարակ համայն մարդկությանը բերած ծառայությունների համար՝ մասնավորապես շեշտելով, որ իսպանացի գրողի պես անձանց ջանքերի շնորհիվ Հայոց ցեղասպանությունը պիտի ճանաչվի ու դատապարտվի բոլոր ժողովուրդների ու պետությունների կողմից:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑՈՎ ՄԵԿՆԵՑ ՖՐԱՆՍԻԱ ԵՒ ՇՎԵՅՑԱՐԻԱ

Հունիսի 23-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական այցով մեկնել է Ֆրանսիա եւ Շվեյցարիա թեմական-եկեղեցական հարցերով:

Այցի ընթացքում Նորին Սրբությունը հանդիպումներ ունեցավ թեմական-վարչական կառույցների ներկայացուցիչների եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարերարների հետ:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էր գավազանակիր Տ. Անանիա աբեղա Ծատուրյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ կատարվել են եկեղեցականների նոր նշանակումներ:

Հայրապետական փնօրհնությամբ Տ. Արսեն քահանա Սարոյանը, ազատվելով Բանակի առաջնորդությունում սպանձնած իր պարտականություններից, ծառայության է կոչվել Կալկաթայի Հայոց Մարդասիրական Ճեմարանում, Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգեւոր սպասավոր Տ. Սեւակ քահանա Գաբրիելյանն իր ծառայությունը կշարունակի ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմում:

Տ. Հրաչ քահանա Մուրադյանն իր հոգեւոր սպասավորությունը կբերի Բուլղարիայի հայոց թեմում, Տ. Օշին քահանա Հայրապետյանը՝ Արթիկի թեմում, Տ. Հեթում քահանա Թարվերդյանը՝ Ռումինիայի հայոց թեմում եւ Տ. Հարություն քահանա Սեփանյանը՝ Արգենտինայի հայոց թեմում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

*«ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ*

Արփեմ Սարգսյան (ԱՄՆ Արեւմտյան թեմ)
Սիլվա Գարայան (ԱՄՆ Արեւմտյան թեմ)
Սվետլանա Նավասարդյան (Արարատյան Հայրապետական թեմ)

*«ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ*

Անիտա Անսրյան (ԱՄՆ Արեւելյան թեմ)
Ժիրայր Նշանյան (ԱՄՆ Արեւելյան թեմ)
Հերմինե Ջանոյան (ԱՄՆ Արեւմտյան թեմ)

*ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ*

Պատգամավորական ժողով (Բուլղարիայի թեմ)
Բաբկեն Հարությունյան (Արթիկի թեմ)
Կ. Պոլսի վարժարան (Կ. Պոլսի Հայոց պատրիարքություն)